Որակավորման քննություններ 2011թ,

18.04.2011 10:39

Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Համաձայն “Փաստաբանության մասին” ՀՀ օրենքի 28-ի հոդ. պահանջների ՀՀ փաստաբանների պալատը կազմակերպում է 2011թ. փաստաբանական գործունեության արտոնագիր ստանալու համար հավակնորդների որակավորման քննություններ:

Քննության հետ կապված հարցերին հավակնորդները կարող են ծանոթանալ Պալատի www.advocates.am ինտերնետային կայքէջում և 56 07 76 (+101 կամ 114) հեռախոսահամարներով:

Հավակնորդների դիմումները կընդունվեն Պալատի վարչական շենքում /հասցեն՝ Երևան, Զաքիյան, 3, սենյակ 9/ Պալատի որակավորման հանձնաժողովի կողմից ս.թ. մայիսի 2-ից մինչև մայիսի 14-ը ներառյալ՝ ամեն օր, բացի կիրակի օրերից, ժամը 10:30-ից մինչև 18:00:

Քննությունների անցկացման հետ կապված նամակագրությունն իրականացվում է առձեռն կամ հետադարձ ծանուցմամբ՝ փոստային առաքման միջոցով, հետևյալ հասցեով՝ ք. Երևան, Զաքիյան 3, ՀՀ փաստաբանների պալատ, “Որակավորման հանձնաժողովին” նշումով:

ՀՀ փաստաբանների պալատի որակավորման հանձնաժողով

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })